«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

27 մարտի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2001 թվականի N 239

քաղ. Երևան

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը լրաց. 22.01.09 N 79-Ն)

Համաձայն Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 34, 35, 48 և 49-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Հաստատել՝

ա) «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը (կցվում է).

բ) «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը (կցվում է):

(պարբերությունն ուժը կորցրել է 10.10.12 N 1288-Ն)

(որոշումը լրաց. 02.06.01 N 485, 22.01.09 N 79-Ն, փոփ. 10.10.12 N 1288-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
մարտի 27-ի N 239 որոշմամբ

Կ Ա Ր Գ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ

1. Սույն կարգի դրույթներով կարգավորվում են «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության սահմանման հետ կապված հարաբերությունները՝ բացառությամբ մշակութային արժեքների: Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման կարգը սահմանելու մասին» N 827-Ն որոշմամբ:

2. «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է, ըստ արտադրական պրոցեսի, վերամշակման համար ներմուծված մեկ միավոր ապրանքի և տեղական ու այլ ապրանքների քանակությունից՝ բնաիրային կամ արժեքային չափման միավորներով կամ տոկոսային արտահայտությամբ:

3. «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք թափոնների և մնացորդների քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է արտադրական պրոցեսի արդյունքում և չի համարվում սույն կարգի 2-րդ կետով սահմանված վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն:

4. Մնացորդ է համարվում սույն կարգի 3-րդ կետով սահմանված՝ վերամշակումից ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն չհանդիսացող՝ վերամշակումից գոյացած հումքի և նյութերի այն քանակությունը, որը դասվում է հումքի, նյութերի հետ նույն ԱՏԳ ԱԱ ծածկագրին և չի կորցրել իր սկզբնական սպառողական հատկությունները:

5. Թափոն է համարվում վերամշակումից գոյացած հումքի, նյութերի այն քանակությունը, որը դասվում է հումքի, նյութերի հետ նույն ԱՏԳ ԱԱ ծածկագրին, կորցրել է իր սկզբնական սպառողական հատկությունները և հնարավոր չէ օգտագործել որպես հումք՝ նմանատիպ կամ այլ արտադրական պրոցեսում:

6. Կորուստ է համարվում ապրանքների վերամշակման արտադրական գործընթացի արդյունքում գոյացած և (կամ) չվերականգնվող (անվերադարձելի) հումքի, նյութերի այն քանակությունը, որը կորցրել է իր սկզբնական հատկությունները:

7. Ապրանքներ ներմուծող անձը (այսուհետ՝ հայտատու) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին) է

ներկայացնում «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկը՝ համաձայն N 1 ձևի, որը հաշվարկվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) պատվիրատուի և վերամշակողի (արտադրողի) միջև կնքված պայմանագրով ամրագրված վերամշակման նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակությամբ.

2) վերամշակողի (արտադրողի) կողմից տվյալ արտադրանքի արտադրության համար հաստատված ազգային կամ միջազգային ստանդարտների, տեխնիկական փաստաթղթերի կամ միջպետական ԳՈՍՏ-երի (ГОСТ-երի) պահանջներին համապատասխան հաշվարկված վերամշակման նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակությամբ.

3) գիտահետազոտական կազմակերպությունների կողմից հաստատված վերամշակման նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակությամբ, որոնք իրենց կազմում կարող են ունենալ կամ անհրաժեշտության դեպքում ներգրավել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ:

8. Վերամշակման նվազագույն արդյունքի քանակությունը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև վերամշակման ընթացքում առաջացող թափոնների, մնացորդների և արտադրական կորուստների քանակությունները:

9. «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկի վերաբերյալ եզրակացություն (այսուհետ՝ եզրակացություն ձև N 3) ստանալու համար, եթե վերամշակման արդյունքում ստացված ապրանքներն արտահանվում են պատվիրատուին, հայտատուն էլեկտրոնային (secretariat@mineconomy.am) կամ թղթային եղանակով լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 2 ձևի.

2) պատվիրատուի և վերամշակողի (արտադրողի) միջև կնքված ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրի պատճենը.

3) սույն կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված եղանակով հաշվարկված՝ «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկը՝ համաձայն N 1 ձևի:

10. Եզրակացություն ստանալու համար՝ եթե վերամշակման արդյունքում ստացված ապրանքներն արտահանվում են համաձայն կնքված արտահանման պայմանագրերի, հայտատուն էլեկտրոնային (secretariat@mineconomy.am) կամ թղթային եղանակով լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 2 ձևի.

2) մատակարարման պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի պատճենը և վերամշակման արդյունքում ստացված ապրանքների արտահանման պայմանագրի պատճենը.

3) սույն կարգի 7-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետերով նախատեսված եղանակներով հաշվարկված՝ «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկը՝ համաձայն N 1 ձևի:

11. Հայտատուն եզրակացություն ստանալու համար կարող է դիմել լիազոր մարմին մատակարարման կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրի կնքման պահից: Պայմանագիրը պետք է պարունակի դրույթ ներմուծվող ապրանքների քանակների վերաբերյալ:

12. Հայտատուն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների ամբողջականության և արժանահավատության համար:

13. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, եզրակացությունն առձեռն տրվում կամ ուղեկցող գրությամբ (փոստով) ուղարկվում է հայտատուին և (կամ) էլեկտրոնային եղանակով ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին՝ վերջինիս և լիազոր մարմնի կողմից մշակված ընթացակարգին համապատասխան:

14. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց հետո թերի լինելու դեպքում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով լիազոր մարմինը տեղեկացնում է հայտատուին:

15. Հայտատուն փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ տեղեկացում ստանալու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:

16. Եզրակացություն ստանալու մասին դիմումը լիազոր մարմնի կողմից մերժվում է, եթե չեն պահպանվել սույն կարգի 7-րդ և 15-րդ կետերի պահանջները, ինչպես նաև չի ներկայացվել 9-րդ կամ 10-րդ կետերում նշված փաստաթղթերից որևէ մեկը:

17. Եթե հայտատուի կողմից սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված եղանակով հաշվարկված և N 1 ձևով ներկայացված ապրանքների վերամշակման արդյունքում գոյացած թափոնների և կորուստների չափը գերազանցում է նմանատիպ ապրանքների համար հաստատված և կիրառվող չափի 20 և ավելի տոկոսին, ապա եզրակացությունը տալուց հետո լիազոր մարմնի որոշմամբ հայտատուի ներկայացրած տվյալները կարող են ենթարկվել փորձաքննության: Փորձաքննության կարող են ենթարկվել նաև նոր ապրանքատեսակների վերամշակման արդյունքում գոյացած թափոնների և կորուստների չափերը:

18. Փորձաքննությունը կիրականացվի սույն կարգի 7-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կազմակերպությունների կողմից՝ որոշման 3-րդ կետով նախատեսված փորձաքննությունների անցկացման կարգի համաձայն:

19. Փորձաքննության արդյունքում լիազոր մարմինը կազմում է նոր ճշգրտված եզրակացություն՝ անվավեր ճանաչելով նախկին եզրակացությունը: Լիազոր մարմինը մաքսային ձևակերպումներ իրականացնելու նպատակով ճշգրտված եզրակացությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և իրազեկում հայտատուին:

20. Լիազոր մարմնի կողմից եզրակացություն ստանալու համար ներկայացված դիմումի հիմնավորված մերժումը երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով տրվում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

21. Եզրակացություն տալու մերժումը հայտատուն կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

22. Հայտատուների կողմից ստացված դիմումների և եզրակացությունների հաշվառման համար վարվում է հաշվառման գրանցամատյան, որը կարող է վարվել էլեկտրոնային եղանակով:

ՁԵՎ N 1

Հ Ա Շ Վ Ա Ր Կ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ

NN ը/կ	Անվանումը	Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Քանակը մետր/հատ/կգ/լիտր	Միավոր արտադրանքի վրա ծախսվող հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատների քանակը մետր/հատ/կգ/լիտր
1.	1) Վերամշակման համար ներմուծված ապրանքներ ---------- ---------- ----------			
2.	1) Վերամշակումից հետո ստացվելիք ապրանքային արդյունքը 2) վերամշակման արդյունքում գոյացած՝ - թափոնները - մնացորդները - արտադրական կորուստները			

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

_____ _____ 20 թ.

ՁԵՎ N 2

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Դ Ի Մ Ո Ւ Մ

«Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկի վերաբերյալ եզրակացություն ստանալու

Դիմող _____

(իրավաբանական անձի անվանումը, հեռախոսահամարը, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հեռախոսահամարը ու էլեկտրոնային հասցեն)

Գտնվելու վայրը _____

(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի բնակության վայրը)

Գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը

_____

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը _____

Խնդրում եմ տալ եզրակացություն «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկի վերաբերյալ:

Դիմումին կից ներկայացնում եմ՝

1. Հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատների մատակարարման պայմանագրերի, կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրերի կամ հաշիվ ապրանքագրերի պատճենները և վերամշակման արդյունքում ստացված ապրանքների արտահանման պայմանագրերի պատճենները:

2. «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկը:

3. Այլ փաստաթղթեր (ցանկության դեպքում):

_____

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

_____ _____ 20 թ.

ՁԵՎ N 3

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Եզրակացություն N - Ն

«Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկի վերաբերյալ

Հայտատու՝

Հասցեն՝

Վերամշակման համար ապրանքի մատակարարը՝

Վերամշակման համար ներմուծված ապրանքներ				Վերամշակման արդյունքը					
Անվանումը	Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Չափի միավորը	Քանակը	Անվանումը	Ապրանքի ծածկա-գիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Չափի միավորը	Քանակությունը		
							Ընդամենը	Վերամշակման արդյունքի մեկ միավորի վրա ծախսվող հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատ-ների քանակը	Արտադրակա թափոնների, մնացորդների կորուստների քանակը
1	2	3	4	5	6	7	8	9	10

Ծանոթություն:

Եզրակացություն տվող՝ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Եզրակացության տրման ամսաթիվը

____ _____ 20 թ.

(կարգը լրաց. 22.01.09 N 79-Ն, 30.12.10 N 1750-Ն, խմբ. 20.12.12 N 1682-Ն)

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
մարտի 27-ի N 239 որոշմամբ

Կ Ա Ր Գ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ

1. Սույն կարգի դրույթներով կարգավորվում են «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության սահմանման հետ կապված հարաբերությունները:

2. «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է, ըստ արտադրական պրոցեսի, վերամշակման համար արտահանված մեկ միավոր ապրանքի և տեղական ու այլ ապրանքների քանակությունից՝ բնաիրային կամ արժեքային չափման միավորներով կամ տոկոսային արտահայտությամբ:

3. «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք թափոնների և մնացորդների նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է արտադրական պրոցեսի արդյունքում և չի համարվում սույն կարգի 2-րդ կետով սահմանված վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն:

4. Մնացորդ է համարվում սույն կարգի 3-րդ կետով սահմանված՝ վերամշակումից ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն չհանդիսացող՝ վերամշակումից գոյացած հումքի և նյութերի այն քանակությունը, որը դասվում է հումքի, նյութերի հետ նույն ԱՏԳ ԱԱ ծածկագրին և չի կորցրել իր սկզբնական սպառողական հատկությունները:

5. Թափոն է համարվում վերամշակումից գոյացած հումքի, նյութերի այն քանակությունը, որը դասվում է հումքի, նյութերի հետ նույն ԱՏԳ ԱԱ ծածկագրին, կորցրել է իր սկզբնական սպառողական հատկությունները և հնարավոր չէ օգտագործել որպես հումք՝ նմանատիպ կամ այլ արտադրական պրոցեսում:

6. Կորուստ է համարվում ապրանքների վերամշակման արտադրական գործընթացի արդյունքում գոյացած և (կամ) չվերականգնվող (անվերադարձելի) հումքի, նյութերի այն քանակությունը, որը կորցրել է իր սկզբնական հատկությունները:

7. Ապրանքներ արտահանող անձը (այսուհետ՝ հայտատու) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին) է ներկայացնում «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկը (ձև N 1), որը հաշվարկվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) պատվիրատուի և վերամշակողի (կատարողի) միջև կնքված պայմանագրով որոշված վերամշակման նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակությամբ.

2) վերամշակողի (կատարողի) կողմից հաստատված վերամշակման նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակությամբ:

8. Նվազագույն քանակությունը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև վերամշակման ընթացքում առաջացող թափոնների, մնացորդների և արտադրական կորուստների քանակությունները:

9. «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության հաշվարկի վերաբերյալ եզրակացություն (այսուհետ՝ եզրակացություն ձև N 3) ստանալու համար հայտատուն էլեկտրոնային (secretariat@mineconomy.am) կամ թղթային եղանակով լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 2 ձևի.

2) արտահանվող ապրանքների վերամշակման դեպքում՝ պատվիրատուի և կատարողի միջև կնքված պայմանագրի պատճեն, որը պետք է պարունակի դրույթ՝ վերամշակման նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության վերաբերյալ.

3) «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության հաշվարկը՝ համաձայն N 1 ձևի:

10. Երաշխիքային սպասարկման ժամկետում գտնվող ապրանքների համար՝ եզրակացություն ստանալու համար հայտատուն էլեկտրոնային (secretariat@mineconomy.am) կամ թղթային եղանակով լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 2 ձևի.

2) երաշխիքային սպասարկման ժամկետում գտնվող ապրանքների համար մատակարարի կողմից վերանորոգումը կամ փոխարինումը հավաստող փաստաթուղթը.

3) «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկը՝ համաձայն N 1 ձևի:

11. Երաշխիքային սպասարկման ժամկետն անցած ապրանքների համար՝ եզրակացություն ստանալու համար հայտատուն էլեկտրոնային (secretariat@mineconomy.am) կամ թղթային եղանակով լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 2 ձևի.

2) արտահանվող ապրանքների վերանորոգումն իրականացնող անձանց հետ կնքված պայմանագրի պատճենը և (կամ) մատակարարի (կատարողի) կողմից վերանորոգումն իրականացնելու վերաբերյալ գրավոր համաձայնությունը.

3) «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության հաշվարկը՝ համաձայն N 1 ձևի:

12. Երաշխիքային ժամկետում վերաարտահանված ապրանքների փոխարինումն օտարերկրյա ապրանքներով թույլատրվում է՝ եթե դրանք իրենց նկարագրությամբ, որակով և տեխնիկական ցուցանիշներով համընկնում են վերաարտահանված ապրանքի հետ:

13. Եթե վերամշակման արտադրանքի փոխարինումն օտարերկրյա ապրանքներով թույլատրվում է, ապա օտարերկրյա ապրանքների ներմուծումը կարող է իրականացվել մինչև վերամշակման համար նախատեսված ապրանքների արտահանումը:

14. Հայտատուն եզրակացություն ստանալու համար կարող է դիմել լիազոր մարմին մատակարարման կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրի կնքման պահից: Պայմանագիրը պետք է պարունակի դրույթ ներմուծվող ապրանքների քանակների վերաբերյալ:

15. Հայտատուն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների ամբողջականության և արժանահավատության համար:

16. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, եզրակացությունն առձեռն տրվում կամ ուղեկցող գրությամբ (փոստով) ուղարկվում է հայտատուին և (կամ) էլեկտրոնային եղանակով ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին՝ վերջինիս և լիազոր մարմնի կողմից մշակված ընթացակարգին համապատասխան:

17. Հայտատուն փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ տեղեկացում ստանալու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:

18. Եզրակացություն ստանալու մասին դիմումը լիազոր մարմնի կողմից մերժվում է, եթե չի պահպանվել սույն կարգի 7-րդ և 17-րդ կետերի պահանջները և չի ներկայացվել 9-րդ կամ 10-րդ կամ 11-րդ կետերում նշված փաստաթղթերից որևէ մեկը:

19. Լիազոր մարմնի կողմից եզրակացություն ստանալու համար ներկայացված դիմումի հիմնավորված մերժումը երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով տրվում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

20. Եզրակացություն տալու մերժումը հայտատուն կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Հայտատուների կողմից ստացված դիմումների և եզրակացությունների հաշվառման համար վարվում է հաշվառման գրանցամատյան, որը կարող է վարվել էլեկտրոնային եղանակով:

<u>Ձև N 1</u>

Հ Ա Շ Վ Ա Ր Կ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ

NN ը/կ	Անվանումը	Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Քանակը մետր/հատ/կգ/լիտր	Միավոր արտադրանքի վրա ծախսվող հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատների քանակը մետր/հատ/կգ/լիտր
1.	1) Վերամշակման համար արտահանված ապրանքներ ---------- ---------- ----------			
2.	1) Վերամշակումից հետո ստացվելիք ապրանքային արդյունքը 2) վերամշակման արդյունքում գոյացած՝ - թափոնները -մնացորդները -արտադրական կորուստները			

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

_____ _____ 20 թ.

ՁԵՎ N 2

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Դ Ի Մ Ո Ւ Մ

«Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության հաշվարկի վերաբերյալ եզրակացություն ստանալու

Դիմող _____

(իրավաբանական անձի անվանումը, հեռախոսահամարը, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հեռախոսահամարը ու էլեկտրոնային հասցեն)

Գտնվելու վայրը _____

(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի բնակության վայրը)

Գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը

_____

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը _____

Խնդրում եմ տալ եզրակացություն «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության հաշվարկի վերաբերյալ:

Դիմումին կից ներկայացնում եմ՝

1) արտահանվող ապրանքների վերամշակման դեպքում՝ պատվիրատուի և կատարողի միջև կնքված պայմանագրի պատճեն, որը պետք է պարունակի դրույթ՝ վերամշակման արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության վերաբերյալ.

2) երաշխիքային սպասարկման ժամկետում գտնվող ապրանքների համար՝ մատակարարի կողմից վերանորոգումը կամ փոխարինումը հավաստող փաստաթուղթը.

3) երաշխիքային սպասարկման ժամկետն անցած ապրանքների համար՝ արտահանվող ապրանքների վերանորոգումն իրականացնող անձանց հետ կնքված պայմանագրի պատճենը և (կամ) մատակարարի (կատարողի) կողմից վերանորոգումն իրականացնելու վերաբերյալ գրավոր համաձայնությունը.

4) «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության հաշվարկը.

5) այլ փաստաթղթեր (ցանկության դեպքում):

_____

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

_____ _____ 20 թ.

ՁԵՎ N 3

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Եզրակացություն N - Ա

«Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկի վերաբերյալ

Հայտատու՝

Հասցեն՝

Վերամշակման համար ապրանքի մատակարարը՝

Վերամշակման համար արտահանված ապրանքներ				Վերամշակման արդյունքը					
Անվանումը	Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Չափի միավորը	Քանակը	Անվանումը	Ապրանքի ծածկա-գիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Չափի միավորը	Քանակությունը		
							Ընդամենը	Վերամշակման արդյունքի մեկ միավորի վրա ծախսվող հումքի, նյութերի և կիսաֆաբ-րիկատների քանակը	Արտադրական թափոնների, մնացորդների, կորուստների քանակը
1	2	3	4	5	6	7	8	9	10

Ծանոթություն:

Եզրակացություն տվող՝ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Եզրակացության տրման ամսաթիվը

_____ _____ 20 թ.

(կարգը լրաց. 22.01.09 N 79-Ն, խմբ. 20.12.12 N 1682-Ն)